

ԱԼԷՔՍԱՆԴՐ ՍԵՐԳԷՅՎԻՉ ՊՈԻՂԿԻՆ

Նորա ծննդեան 100-ամեկի առիթով

Ա.

Ռուսաց յաջանի բանաստեղծ Պուշկինը ծնունեց Մոսկուայում 1799 թուի մայիսի 26 ին։ Նա ծագումով Ռուսաստանի հին ազնուականներից էր։ Մանուկ հասակում նա մի լուռ ու մոռնի և դանդաղ դուրս երեխայ էր, իսկ յետոյ բուրդովին փոխուեց նորա բնաւորութիւնը։ Պուշկինը ուսման մէջ թէպէտ ծղւ էր, բայց շատ ընթերցասէր էր. նա շարունակ կարդում էր իւր հօր մատենադարանի գրքերը, որոնք համարեա թէ բոլորն էլ ֆրանսերէն էին։ Պուշկինը դեռ տասնմէկ տարեկան հասակում, ինչպէս պատմում էր նորա եղբայրը, անգիր էր արել ֆրանսիական բոլոր գրականութիւնը։ Նա 1811 թուին մտաւ Ցարսկոէ Սէլօի նորաբաց ձեւարանը։ Այստեղ մի քանի ուսանողներ Պուշկինի հետ միասին կազմեցին գրագէտներին մի փոքրիկ շրջան և սկսեցին հրատարակել գրական կանաչան գանաչան հանդէսներ։ 1815 թուին ձեւարանի հարցաքնութիւնների օրը, Պուշկինը հրապարակաւ կարդաց իր բանաստեղծութիւնը։ Ռուսաց յաջանի գրող Դերժաւինը, որ ներկայ էր այդ հանդիսին, հիանալով երիտասարդ պոէտի ուսանաւորի վերայ, կամեցաւ գրկել Պուշկինին. բայց համեստ և ամաչկոտ պոէտը իսկոյն փախաւ դահլիճից։ 1817 թուին Պուշկինը աւարտեց իր ուսումը, իսկ 1820 թուին նա, իր քաղաքական ազատասուութեան համար, արքայութեան Ռուսաստանի հարաւային երկիրները, ուր նա մընաց մինչև 1824 թուականը։ 1820 թուին Պուշկինը եկաւ Կովկաս, իսկ յետոյ փոխադրուեցաւ Ղրիմ։ Ահա այդ ճանապարհորդութիւնից է նա քաղել իր «Կովկասի գերիւն» և «Բախչիսարայի շատրւան» պոէմաների նիւթը։ Պուշկինը 1820 թուի վերջին տեղափոխուեց Քիշինև, որտեղից Բեսարաբիայի կառավարիչ Ինդովը նորան, մի խռովութեան պատճառով, ուղարկեց Իզմայիլ։ Այստեղ պոէտը միացաւ գրչունների խմբին, սկսեց նորանց հետ թափառական կեանք վարել, ուսումնասիրել նորանց կենցաղը, որից յետոյ նա ստեղծագործեց իր «Գնչուներ» հրաշալի պոէման։ Քիշի-

նւում նա սկսեց գրել իր «Եւգենիյ Օնեգին»-ը, որի շարունակութիւնը գրեց Օդեսայում 1823 թուին, երբ պոէտը ծառայում էր այնտեղի նահանգապետ Կոմս Վորոնցովի մօտ։ Սակայն աղատամիտ Պուշկինը Վորոնցովի ձեռքի տակ էլ չըկարողացաւ երկար ծառայել։ Երբ Վորոնցովը Պուշկինին ուղարկում է մորեխ ջնջելու, վիրաւորուած պոէտը իր յանձնած գործի մասին այս տեսակ է տեղեկութիւն տալիս.

Մ. ո. ր. և խ.

Եկաւ, եկաւ,

Վեր եկաւ,

Ողջը կերաւ

Ու կորաւ։

Զայրացած Վորոնցովը պաշտօնից զրկեց Պուշկինին և 1824 թուին ուղարկել տուեց նորան Միխայլովկայէ գիւղը, որտեղ գտնւում էր Պուշկինների կալուածքը։ Այստեղ Պուշկինը աւարտեց իր «Եւգենիյ Օնեգին» և գրեց «Բօրիս Գոգոլնովը»։ Երկու տարուց յետոյ Նիկողայոս I կայսեր հրամանով Պուշկինը գիւղից գնաց Մոսկուա, որտեղից 1827 թուին տեղափոխուեց Պետերբուրգ։ Այնուհետև նա ապրում էր Պետերբուրգում և ամեն տարի աշնանը վերադառնում էր գիւղը նորանոր երկեր ստեղծագործելու։ 1829 թ., Ռուս-թաճկական պատերազմի ժամանակ, Պուշկինը մտաւ կովկասեան զօրագունգը, ահա դորանից յետոյ էր, որ նա գրեց իր «Ճանապարհորդութիւն դէպի Էրզրում» երկը։ Պուշկինը 1831 թուին Մոսկուայում ամուսնացաւ Նատալիա Գոնչարովայի հետ։ Ամուսնութիւնից յետոյ նա պաշտօն ստացաւ Արտաքին գործոց նախարարութեան մէջ տարեկան 5,000 ռուբլի ռոճիկով։ Պուշկինը 1833 թուին ճանապարհորդեց Ղազանի և Օրենբուրգի կողմերում, ուսումնասիրեց Պուգաչով անունով աւազակապետի արարքները, որից յետոյ նա գրեց իր «Վապիտանի աղջիկ» վէպը և «Պուգաչովեան խռովութիւնների պատմութիւնը»։ Այս վերջին գրուածքի համար պոէտը ստացաւ կամենրինկերի պաշտօն և 20,000 ռ. դրամ, իբրև տպագրական ծախք։ Կայսրը միշտ յարգում, խնամում էր Պուշկինին և յաճախ հրաւիրում էր նորան իր կնոջ հետ միասին պալատը։ Այս հանգամանքը գրգռում

էր պալատին մօտիկ աղնուականների նախանձը. այդ պատճառով էլ պալատական աղնուականները քմահաճութեամբ էին վերաբերում դէպի պօէտը: Նոցա այդպիսի վերաբերումը զայրացնում էր ինքնասէր Պուշկինին: 1836 թուին Պուշկինն սկսեց հրատարակել «Современникъ» եռամսեայ հանդէսը, որի մէջ ղետեղւում էին Ռուսաց և այլազգի գրականութիւնից զանազան երկեր և մատենախօսութիւն: Մատենախօսութիւնը, որ Ռուսաց ուրիշ թերթերում ծառայում էր իրանց հրատարակիչների եսին և քմահաճոյքին, Պուշկինի հանդիսում գլխաւոր և լուրջ տեղ էր բռնում: Այնժամանակուայ Ռուսաց թերթերի մատենախօսական բաժինը յիշեցնում է հայոց այժմեան բոբիկ և բոսոտ կրիտիկոսների բարբառնալիքը և սորանց փողոցային սրախօսութիւնները (Տիգրան Յովհաննիսեանի քէֆին չը դիպչի!): Պուշկինի նպատակն էր վերստեղծել մատենախօսութիւնը և դնել նորան սուրբ և անաչառ հիմունքների վերայ:

Պետերբուրգի հասարակութեան մէջ 1836 թուի վերջերին Պուշկինի կնոջ մասին սկսեցին պատել զանազան ամբաստանութիւններ: Հոլլանդական հիւպատոսի ապօրինի որդին, Դանտէսը, որ մի թեթևսովիկ և դատարկապորտ սպայ էր, սկսեց հետամուտ լինել Պուշկինի համեստ կնոջ: Պօէտը և նորա բարեկամները մի քանի անգամ ստացան անօնիմ նամակներ, որոնց մէջ չարանենգ ակնարկութիւններ էին արուել Դանտէսի սիրային յաջողութեան մասին: Դանտէսի հստիքը, որ մի անբարոյական ծերունի էր, աջակցում էր իր որդուն: Նա աշխատում էր համոզել Պուշկինի կնոջ թողնել իր ամուսնուն և անձնատուր լինել Դանտէսին: Այս բոլորը հասնում էին Պուշկինի ականջին, յուզում, զայրացնում պատուասէր պօէտին: Համբերութիւնից դուրս եկած, Պուշկինը Դանտէսին մենամարտութեան հրաւիրեց: Սակայն երբ Դանտէսը պահկուեց Պուշկինի քենու հետ, այնժամանակ բանադատեց յետ վերջրեց իւր հրաւերը: Բայց և այնպէս Պուշկինը առում էր իր քենակալին, չէր ընդունում նորան իր տանը և միշտ խոյս էր տալիս նորանից: Իսկ ժողովրդի մէջ նախկին ամբաստանութիւնները շարունակւում էին: Շատերը պնդում էին, որ Դանտէսը պահկուել է Պուշկինի քենու հետ, որպէս զի այդպիսով սքօղի

իր և պօէտի կնոջ յարաբերութիւնները: Այս անգամ Պուշ-
կինը կտրական կերպով մնամարտութեան հրաւիրեց Դան-
տէսին, որի տարձանակի մահառիթ գնտակից ծանր վէրք
ստացաւ և երկու օր տանջուելուց յետոյ սւանդեց իր հո-
գին 1836 թուի յունուարի 28-ին:

Պուշկինը Ռուսաց գրականութեան մէջ խոշոր տեղ է
բռնում: Նա ասպարէզ եկաւ հէնց այն ժամանակ, երբ օ-
տարամոլ հասարակութիւնը ատելութեամբ էր վերաբեր-
ւում դէպ իր հայրենիքը, մայրենի լեզուն և բոլոր ուսա-
կանութիւնը: Երբ ռուսաց գրականութիւնը չ'ունէր ինք-
նուրոյնութիւն և զուրկ էր ազգային ոգուց: Ահա այդ
ձգնաժամին ասպարէզ եկաւ Պուշկինը, փրկեց իր ժողո-
ւիւրից օտարամոլութիւնից, ստեղծեց ազգային և ինքնու-
րոյն գրականութիւն, մայրենի անուշ բարբառով հմայեց իր
ազգի սիրտը և այդպիսով հաստատ ու անսասան 'արձան
կանգնեցրեց իր համար, ինչպէս ինքն այդ խոստովանում է.

Եւ արձան եմ կանգնեցրել անձեռագործ ինձ համար,
Որպէս ուղի՛չի կոխկըրտուիլ նա ոտքի տակ մարդկութեան,
Իմ արձանը վեր է անչափ իր գըլխովը անխոնարհ,
Մինչև անգամ Աղէքսանդրեան բարձր սիւնից անսասան:
«Պուշկինը մի արտակարգ երևոյթ է», ասում է Դո-
գշլը: Եւ իսկապէս այն յաղթանակը, որ տարաւ նա իր
ժամանակի ծանր պայմանների և ոգու դէմ կռուելիս, ոչ
միայն նուաճ արտակարգ երևոյթ է դարձնում, այլ և—մի
գերբնական աստղ, որի լուսով մենք, հայերս, էլ ենք ա-
ռաջնորդուել և առաջնորդուում: Նորա ցանած բարւոյ և
գեղեցկի սերմերը մեր ապառաժառ կովկասումն էլ են ծլել,
աճել և տուել մեզ իրանց բազցր պոռնդները: Նորա քնարի
գիւթիչ հնչիւնները մեր սրտերումն էլ են արձագանք գտել:
Այսօր քանի՜ հայ մանուկներ կարդում են Պուշկինի երկե-
րը, անգիր անում նորա ոտանաւորները և հրճուանքով եր-
գում նորա նուագները: Պուշկինի ծննդեան հարիւրամեակի
առնել, որ կատարուեց այս տարուայ մայիսի 26-ին, մեր
ընդհանուր հայրենիքի առնն էր, որին մասնակից էինք և
մենք, հայերս:

Բ.

Ջ Ր Ա Հ Ե Ղ Ձ Ը

(Պուշկինից)

Մանուկները խրճիթ մտան,
 Կանչեցին հօրն շտապ-շտապ.
 «Հայրե՛կ! հայրե՛կ! եկ, մեր ուռկան
 Մի մեռել է քաշել գետափ!»
 — Սուտ էք ասում, հառամզադէք,
 Գոչեց հայրը որդոց վերայ. —
 Այդ էր պակաս, որ հընարէք!
 Դէ, սուս կացէք՝ մարդ կիմանայ!

Թէ չէ կ'ընկնի դատաստանի —
 Խաթաբալի կը հանդիպեմ,
 Այնժամ էշին ցեխից հանի...
 Է՛հ, ինչ արած! Դուրս գամ, նայեմ...
 Հապա ուր է? — «Ահա՛, ահա՛»
 Եւ խկապէս գետի ափին,
 Ուր փռուած էր գետնի վերայ
 Թաց ուռկանը, ընկած էր դին:

Եւ կապտած դին սարսափելի
 Փքուել էր ու ալլանդակուել:
 Թէ թշուառ էր մի խղճալի
 Իր մեղաւոր կեանքից զրկուել,
 Թէ ձկնորս էր ջրում խեղդուած,
 Թէ կտրե՛ճ էր մի արբեցող,
 Թէ գողերից մի կողոպտուած
 Վաճառական անզգուշացող —

Այդ գիւղացու գործը չէր!
 Աչք ածելով և ըշտապով
 Զրահեղձի սառած ոտներ
 Նա բռնում է ու քաշ տալով
 Գցում ջուրը խեղճ մեռելին,
 Թիակով էլ հրում հեռու.
 Եւ դին անթաղ գնաց կրկին
 Խաչ, գերեզման որոնելու:

Ողջ մարդու պէս ջրի միջին
 Նա լողում էր ու տատանւում.
 Յետից նայեց մեր գիւղացին,
 Նայեց երկար ու գնաց տուն.
 «Էյ, լակոտներ, ինչ հետ եկէք!
 Ձեզ մի մի հատ բըլթ կըտամ,
 Բայց սուս կացէք, ձայն չը հանէք,
 Ապա թէ ոչ՝ քօթակ կըտամ!»

Կէս գիշերին եղանակը
 Խառնակուեցաւ, գետը յուզուեց.
 Եւ ծխալից տան ճրտգը
 Այրուեց արդէն, իսպառ մարեց.
 Երեխայքը հանգիստ պառկած՝
 Քնած էին. դուրսը բուք էր.
 Եւ գիւղացին լսեց յանկարծ
 Պատուհանի թրխկթրխկոցներ:

«Ո՞վ ես? – Ես եմ, Էյ, դուռը բաց!
 «Ինչ ես շրջում կէս գիշերին
 Կայէնի պէս դու մոլորուած?
 Որ սատանան այս միջոցին
 Իմ խրճիթը քեզ ուղարկեց?
 Տունս պտտիկ, նեղ է ու մութ:
 Եւ ծոյլ ձեռքով նա բաց արեց
 Իր խրճիթի փակ լուսամուտ:
 Շողշողում է լուսին վերից –
 Լուսամուտի առաջ մի մարդ
 Կանգնած է մերկ. թաց միրուքից
 Զուր է թափւում. դէմքը հանդարտ,
 Սառն է, անշարժ, նորա կռներ
 Կախ են ընկած. ուռած մարմնին
 Սևիկ-սևիկ խեցգետիններ
 Սմուր կպել՝ շարուել էին:

Եւ գիւղացին ահից փակեց
 Լուսամուտը. իր մերկ հիւրին
 Ճանաչելով՝ նա զարհուրեց.

«Այ, ճաքի քո ուռած մարմինն՝
 Նա շշնջաց լեղապատառ:
 Խառնակուեցին նորա մտքեր,
 Եւ մինչեւ լոյս հանգիստ չը կար —
 Ծեծուում էին լուսամուտներ:

Ժողովրդի մէջ սոսկալի
 Լուր է շրջում՝ ասում են, որ
 Խեղճ գիւղացին ամեն տարի
 Ըսպասում է հիւրին տկլոր,
 Ճիշտ միւսնոյն գիշերն յանկարծ
 Փոթորիկ է բարձրընում,
 Ու մէնչեւ լոյս մարդը խեղդուած
 Պատուհանն է անվերջ ծեծում:

Մայիսի 1-ին 1899 թ.

Թեֆլիս

Գ.

Է Լ Ե Պ Ի Ա

(Պուշկինից)

Թէ աղմկալից փողոցն եմ շրջում,
 Թէ բազմաամբոխ տաճարն եմ մտնում,
 Եւ թէ խելագուրկ ջահէլների մէջ
 Միշտ մտորում եմ, մտորում անվերջ:
 Ասում եմ՝ ահա անցնում են տարիք,
 Եւ մենք բոլորս, երկրի ողջ մարդիկ,
 Կ'իջնենք յաւիտեան սառը գերեզման —
 Ով գիտէ՝ հիմա ով է մօտ մահուան,
 Թէ նայում եմ ես կաղնուն մենաւոր,
 Անտառի այգ հին ծառին դարաւոր,
 Խորհում եմ — թաղեց նա մեր հայրերին,
 Ինչնից յետոյ էլ կ'ապրի տակաւին:
 Սիրասուն մանկան երբ փայփայում եմ՝
 Դէ մնաս բարեալ, — իսկոյն խորհում եմ,
 Այս կեանքում տեղս ես տալիս եմ քեզ,
 Ես կը մահանամ — դու դեռ կը ծաղկես!

Ամեն մի տարի, ամենայն մի օր
 Անց եմ կացնում ես միշտ մտամոլոր —
 Միշտ աշխատում եմ մեկնել ապագաս,
 Գուշակել՝ թէ երբ կըգայ իմ օրհաս:
 Արգեօք որտեղ է ինձ մահ սպասում —
 Պանգխտութեան մէջ, կու ում թէ ծովում?
 Գուցէ մերձակայ հովիտի միջին
 Պիտի թաղուի իմ անզգայ մարմին?
 Եւ թէպէտ անշունչ դիակիս համար
 Ողջ մէկ է, ուր էլ իմ փրտի իսպառ,
 Սակայն կ'ուզէի իմ սիրած երկրում
 Ննջել լաւիտեան, հանգչել իմ հողում:
 Եւ թող իմ սառը շիրմիս առաջին
 'Իեռահաս կեանքը խաղայ զուարթագին,
 Եւ բնութիւնը անտարբերութեամբ
 Փայլի լաւիտեան իր գեղեցկութեամբ:

ԹԱՐՈՒԹԻԻՆ ԹՈՒՄԱՆԵԱՆՑ

Ծննդեան հարիւրամեակի առիթով «Աղբիւր Տարազ»-ի
 խմբագրութիւնը հրատարակել է մի շքեղ Պուշկինեան Ժո-
 ղովածու, որի մէջ զետեղուած են Պոէտի հետեւեալ բա-
 նաստեղծութիւնները, 1) Ես արժան եմ կանգնացրել —
 Բալուդեան, 2) Զրահնդժը — Յովհաննէս Թումանեան, 3)
 Մի նրգիր, չքնաղ — Ոսոփրիոս Անոփեան, 4) Պօէտին —
 Յարութիւն Թումանեան, 5) Դնչունը. Գ. Աստուածատրեան:
 «Տարազ»-ի խմբագրութիւնը այս Ժողովածուից 1000 օրինակ
 ձրի բաժանել է Թիֆլիսի միջնակարգ և ստորին դպրոցների
 հայ սաներին: Մայիսի 28-ին լոյս տեսած «Տարազ» ըզուտ
 Պուշկինեան էր: Այս №-ից 500 օրինակ խմբագրութիւնը
 ձրի բաժանել է Թիֆլիսի դպրոցների հայ աշակերտներին:

Թիֆլիսի Հայոց Հրատարակչական ընկերութիւնը Պուշ-
 կինեան տօնի առթիւ հրատարակել է «Քնար Ա. Ս. Պուշ-
 կինի» վերնագրով մի Ժողովածու աշխատակցութեամբ